



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Լու Անջելեսի նվազագույն աշխատավարձ

Գրույթաչափն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից



\$18.42 մեկ ժամում

Բոլոր Գործատուներից պահանջվում է Աշխատակիցներին վճարել նոր նվազագույն աշխատավարձ՝ համաձայն Լու Անջելեսի նվազագույն աշխատավարձի որոշման: Նվազագույն աշխատավարձի դրույթաչափը կճշգրտվի ամեն տարի՝ համաձայն Լու Անջելեսի նվազագույն աշխատավարձի 187.02-րդ հոդվածի:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը.	Բոլոր գործատուները՝
7/1/2023	\$16.78
7/1/2024	\$17.28
7/1/2025	\$17.87
7/1/2026	\$18.42

Լու Անջելեսում գործատուները ենթարկվում են բոլոր տեղական, նահանգային և դաշնային նվազագույն աշխատավարձի օրենքներին և աշխատանքային ստանդարտներին:

Լու Անջելեսի Աշխատավարձի ստանդարտների գրասենյակի (Office of Wage Standards) հրամանագիրը իրավասություն է տալիս Պայմանագրերի կառավարման բյուրոյին (Bureau of Contract Administration), Աշխատավարձի ստանդարտների գրասենյակին հետաքննելու հնարավոր խախտումները, ստուգելու աշխատատեղերը, հարցազրույցներ վարելու աշխատակիցների հետ և ուսումնասիրելու աշխատավարձի հաշվետվությունները: Աշխատավարձի ստանդարտների գրասենյակը կիրականացնի Քաղաքի նվազագույն աշխատավարձի մասին որոշումը խախտումների համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով. 1) Լու Անջելեսի նվազագույն աշխատավարձը չվճարելը, 2) Ծանուցման, հայտարարության և աշխատավարձի հաշվետվությունների պահանջները չկատարելը և 3) հաշվեհարդար. Լու Անջելեսի քաղաքային օրենսգրքի (LAMC) Բաժին 188.04-ը պաշտպանում է աշխատակիցներին ցանկացած խտրականությունից կամ վրեժխնդրությունից՝ քաղաքի նվազագույն աշխատավարձը ստանալու իրենց իրավունքների իրականացման համար:

Լու Անջելեսը վճարովի հիվանդության արձակուրդ

Ուժի մեջ է 2017 թվականի հուլիսի 1-ից

Բոլոր Գործատուներից կպահանջվի տրամադրել վճարովի հիվանդության արձակուրդ՝ համաձայն Լու Անջելեսի նվազագույն աշխատավարձի հրամանագրի: Վճարովի հիվանդության արձակուրդը կտրամադրվի բոլոր այն Աշխատակիցներին, ովքեր աշխատում են Լու Անջելես քաղաքում որոշակի շաբաթվա ընթացքում անվազն երկու ժամ նույն Գործատուի համար մեկ տարվա ընթացքում 30 օր կամ ավելի:

Իրավունք	
Յուրաքանչյուր նպաստային տարվա սկիզբ	Առնվազն 48 ժամ տրամադրված կամ աշխատանքի յուրաքանչյուր տարվա սկզբում, օրացուցային տարվա կամ 12-ամսյա ժամանակահատվածում ԿԱՄ
Կուտակում	Մեկ (1) ժամ վճարովի հիվանդության արձակուրդ յուրաքանչյուր երեսուն (30) ժամվա դիմաց:
72 ժամ սահմանափակում	Աշխատակցի՝ նախապես վճարվող կամ կուտակված և չօգտագործված հիվանդության պատճառով աշխատանքից բացակայելու վճարովի արձակուրդը փոխանցվում է հաջորդ աշխատանքային տարի և կարող է սահմանափակվել նվազագույնը 72 ժամով: Գործատուն կարող է սահմանել ավելի բարձր սահմանաչափ կամ ընդհանրապես սահմանաչափ չսահմանել:
Աշխատանքից ազատում	Գործատուն պարտավոր չէ Աշխատակիցին փոխհատուցում տրամադրել աշխատանքային կուտակված կամ չօգտագործված հիվանդության օրերի համար՝ աշխատանքից ազատվելիս:
Վերականգնում	Եթե Աշխատակիցը աշխատանքի է ընդունվում աշխատանքից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ապա նախկինում կուտակված և չօգտագործված վճարովի հիվանդության արձակուրդը վերականգնվում է:

Օգտագործում	
Երբ	Աշխատակիցը կարող է օգտվել վճարովի հիվանդության արձակուրդից սկսած աշխատանքի 90-րդ օրվանից:
Ինչպես	Գործատուն Աշխատակիցի բանավոր կամ գրավոր խնդրանքով տրամադրում է հիվանդության արձակուրդ իրենց, ընտանիքի անդամի կամ արյունակցական կամ ազգակցական կապ ունեցող որևէ անհատի համար: Ժամանակի որակավորված օգտագործումը կարելի է գտնել LAMC-ի 187.04 (G) բաժնում:

Վճարովի հիվանդության արձակուրդի օգտագործումը կարող է սահմանափակվել տարեկան 48 ժամով: Լու Անջելեսի քաղաքային օրենսգրքի 187.06 բաժինը պաշտպանում է աշխատակիցներին ցանկացած խտրականությունից կամ վրեժխնդրությունից՝ քաղաքի վճարովի հիվանդության արձակուրդը ստանալու իրենց իրավունքների իրականացման համար:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապվել Աշխատավարձի ստանդարտների գրասենյակ (Office of Wage Standards)՝ 1-844-WAGESLA (924-3752) հեռախոսահամարով կամ էլ. wagesla@lacity.org հասցեով կամ այցելել <http://wagesla.lacity.gov/>:

Որպես հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի (Americans with Disabilities Act) II վերնագրի ներքո գտնվող ընդգրկված կազմակերպություն՝ Լու Անջելես քաղաքը խտրականություն չի դնում հաշմանդամության հիման վրա և, ըստ պահանջի, կտրամադրի ողջամիտ փոփոխություններ՝ ապահովելու իր ծրագրերին, ծառայություններին և գործողություններին հավասար հասանելիություն: